ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

___Հայոց լեզվի և գրականության_____

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __8__

«_23_» __հունվար__ 2024թ.

ՀԼԳ/մ–013 « ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՐԳԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.7 Հայոց լեզու և գրականություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության մագիստրոս

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ առկա

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ առկա I կուրս, II կիսամյակ

Դասախոս(ներ) ՝ Դավիթ Գյուլզատյան

/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ davitgiulzadyan@gmail.com

Վանաձոր – 2024 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը կրթական ծրագրով սահմանված խնդիրների լուծման գործընթացում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը կրթական ծրագրով սահմանված խնդիրների լուծման գործընթացում[1]

«Լեզվաբանական համամակարդակային գիտակարգեր» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է մագիստրատուրայի կամընտրական կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է մագիստրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

Առարկայական փաթեթը կարգավորում է «Լեզվաբանական համամակարդակային գիտակարգեր» դասընթացի ուսումնամեթոդական նյութերով ապահովման, պարբերաբար թարմացման, գիտաճյուղի նոր մոտեցումների ոգուն համապատասխանեցման գործընթացը, նպաստում է ուսանողի անհատական և ինքնուրույն աշխատանքի արդյունավետության, նրա գիտական իմացության ձեռքբերման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև հետազոտական աշխատանք կատարելու ունակության ապահովմանը:

Ծրագրի մեկնաբանությունը: Առաջարկվող դասընթացի առանձնահատկությունը հենց նրա յուրօրինակությունն է, որը կազմավորված է մեկ գիտության՝ լեզվաբանության ներսում առկա՝ ստորակարգային մակարդակների վրա հիմնված, սակայն այդ մակարդակներից որևէ մեկին համապատասխանող գիտական բաժնում չպարփակված, ասել է՝ համամակարդակայնության ընդհանրական գիտահենքով: 20-րդ դարի կեսերից կառուցվածքային լեզվաբանությունը, ի թիվս այլոց, վերանայեց նաև ավանդական լեզվաբանության մեջ առանձնացված բաժինները՝ շերտավորելով դրանք լեզվի ստորակարգային մակարդակների հիմքով, որոնք ևս ցարդ շարունակվում են վերանայվել: Նորովի առանձնացված տարբեր բաժինների ներսում կամ դրանց հանգակետերում կազմավորվեցին նոր գիտակարգեր: Դրանցից է շարութաբանությունը, որը բառիս բուն իմաստով ստեղծվեց շարույթի քառսային ըմբռման և իրարամերժ բնորոշումների հետևանքով, և որը առկա լեզվական ու լեզվաբանական փաստերով չի պատկանում կառուցվածքային կամ ստորակարգային որևէ մակարդակին համապատասխանող ոչ մի գիտության: Հիմքը, անշուշտ, շարահյուսական է, թեև հենց շարահյուսության ներսում շարահյուսական վերլուծությունից տարբեր հնարներով է կատրվում այդ միավորի՝ շարույթի, շարահյուսական հետազոտությունը: Եթե շարահյուսական հետազոտության բուն մեթոդը վերլուծությունն է, ապա շարութաբանական քննությունն իրականացվում է վերլուծության ու

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

համադրության և արտածման ու մակածման եղանակների ներհյուս գործադրմամբ: Սակայն շուտով լեզվաբանական ուսումնասիրությունները պարզում են, որ շարահյուսական համարվող շարութաբանական երևույթները համասեռության սկզբունքով տարածվում են նաև լեզվական կառուցվածքի բոլոր մակարդակների վրա, ուստի, հաշվի առնելով այդ փաստերը, շարութաբանությունը համարում ենք համամակարդակային գիտակարգ: Ստորակարգային բոլոր մակարդակներին վերաբերող գիտություն է նաև մի գիտակարգ, որն ըստ էության արդեն տասնամյակներ է, ինչ կազմավորված է, սակայն արձանագրված չէ: Դա լեզվաբանական հիմքագիտությունն է, որի նախնական հիմքն են կազմում միաժամանակ ձևաբանությունն ու բառակազմությունը, և որը ևս համասեռության սկզբունքով տարածվում է բոլոր մակարդակների վրա: Լեզվաբանական հիմքագիտության կարապետներ պիտի համարենք հայ լեզվաբաններ Է. Աղայանին և Գ. Ջահուկյանին, որոնք միևնույն ժամանակաշրջանում ձևաբանության և բառակազմության մեջ գրեթե նույն սկզբունքով, թեև իրարից տարբեր, սակայն իրար լրացնող հայեցակարգեր են մշակել:

Բանասիրական մասնագիտացում ձեռք բերող ուսանողի համար կարևոր ոլորտներից են լեզվաբանական համամակարդակային գիտակարգերը: Դասընթացի ժամանակ ուսանողը արժևորում է համասեռության սկզբունքի դերը՝ տարբեր մակարդակների բաշխվածությամբ: Ընդհանուր լեզվաբանության, լեզվանշանագիտության և լեզվափիլիսոփայության յուրացմամբ և դրանց համաբանությամբ այս գիտակարգերի պարագայում ևս ուսանողի ուշադրության կենտրոնում պիտի պահել լեզվական և արտալեզվական իրողությունների հարաբերակցությունը՝ գիտակցել տալով լեզվական «աշխարհի» արտալեզվական պայմանավորվածությունը, արտաքին իրականության ընկալման լեզվական բեկումը: Խնդրո առարկա գիտակարգերի ուսուցումն իրականացվում է նրա խնդիրների ու պահանջների բովանդակավորման համապատասխան նպատակադրմամբ:

Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերը, տվյալ դեպքում՝ լեզվաբանական հիմքագիտությունը և շարութաբանությունը, ներլեզվաբանական գիտություններ են, որոնց **առարկան** են կազմում ստորակարգային տարամակարդակ միավորների հիմքերը և շարահյուսական, իմաստային և արտահայտաբանական շարույթները:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները

2.1. Գիտակարգի նպատակն է՝ 1) ցույց տալ, որ լեզվաբանության ներսում կան ստորակարգային մակարդակների վրա հիմնված համամակարդակային գիտակարգեր, 2) բնորոշել հիմքի և շարույթի էությունը, պարզել նրանց բնույթը, տեսակները, 3) ծանոթացնել հիմքագիտական և շարութաբանական հետազոտության

մեթոդներին, այդ մեթոդներով պարզել առաջադրվող հիմքերը և շարույթները:

2.2. Գիտակարգի **խնդիրներն** են՝ ա) բոլոր մակարդակներում բացահայտել հիմնային և շարութային բաղադրիչները, դրանց հարաբերությունները և նշանային արժեքը, բ) ճանաչել գիտակարգերի իրարալրաց հայեցակարգերը, գ) կազմել հիմքագիտական հարացույցներ և շարույթների համակցաբանական հարացույցներ, դ) որոշել հիմնային բաղադրիչների շարութաբանական արժեքը և շարույթների հիմքերը:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

Ուսանողը «Լեզվաբանական համամակարդակային գիտակարգեր» դասընթացը յուրացնելու համար պետք է զինված լինի նախորդ տարիներին մի շարք գիտակարգերից ձեռք բերած անհրաժեշտ գիտելիքներով: Նա պետք է տիրապետեր լինի ընդհանուր լեզվաբանության ներածական դաընթացին՝ «Լեզվաբանության հիմունքներին», «Փիլիսոփայության հիմունքներին», մասնավոր լեզվաբանության տեսությանը՝ ի դիմի «Ժամանակակից հայոց լեզվի» դասընթացի բոլոր բաժինների, առնվազն մեկ օտար լեզվի, յուրացրած լինի լեզվանշանագիտության և ընդհանուր լեզվաբանության գիտակարգերը:

Նշվածների հիմամբ ուսանողը պետք է կարողանա պատկերացում կազմել համասեռության սկզբունքի գործադրման մասին, ճանաչել և գնահատել հիմնային միջավայրը և շարակազմը, թափանցել ստորակարգային բոլոր մակարդակների խորքերը, ձեռք բերել հիմնային և շարութային հարաբերությունները, դրանց փոխթափանցումները ինքնուրույն բացահայտելու և իմաստավորելու հմտություններ:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2].

Ա) Ընդհանրական գիտակություն (կոմպետենցիա)

ա) գործիքային գիտակություն.

1) վերլուծելու և համադրելու ունակություն,

2) արտածելու և մակածելու ունակություն,

3) կազմակերպելու և նախագծելու ունակություն.

բ) միջանձնային գիտակություն.

1) քննադատական վերլուծություն և ինքնաքննադատության ունակություն,

2) լեզվաբանական գիտակարգային խմբերում աշխատելու ունակություն,

3) տարոլորտ փորձագետների հետ շփվելու ունակություն.

գ) համակարգային գիտակություն.

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

1) գիտելիքը գործնականում կիրառելու կարողություն,

2) նոր իրավիճակներին հարմարակվելու ունակություն,

3) ստեղծագործելու և հետազոտություններ կատարելու ունակություն:

Բ) Առարկայական գիտակություն

1) դրսևորել հիմքագիտության և շարութաբանության պատմության և հիմունքների իմացություն,

2) ըմբռնել դասընթացի ընդհանուր կառուցվածքի և նրա բաղադրիչների միջև առկա կապերը,

3) կիրառել հիմքագիտությանն ու շարութաբանությանը հատուկ մեթոդներ:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում՝ ըստ աշխատաշուկայի պահանջների[3]

Յուրացնելով լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի դասընթացը՝ շրջանավարտը կարող է իր գիտելիքներն իրացնել բանասիրության և նրան աղերսվող մի շարք ոլորտներում՝ գիտության մեջ, համալսարաններում, դպրոցներում, քաղաքական ասպարեզում, մամուլում և այլուր:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	2 կրեդիտ/60 ժամ	

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն	12	
Գործնական աշխատանք	12	
Ինքնուրույն աշխատանք	36	
Ընդամենը	60	
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ստուգարք	

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կազմած դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի գործուն իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության գործուն մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, փոխներգործուն ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներից լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի դասընթացին կիրառվում են հետևյալները[5].

  - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):

- **Զեկույց** – ուսանողի՝ որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գիտական բանավեճի ապահովում, իրավիճակային խնդիրների վերլուծություն ևլն:
9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, խմբային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման ուրվագծերի կազմում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում ևլն:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[6].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների		
		դասախոսություն	գործնական աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները	1	1	2
2.	Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման: Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը	1	1	2
3.	Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք	1	1	4
4.	Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության	1	1	4
5.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր	2	2	4
6.	Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր	1	1	4
7.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	2	2	4
8.	Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	1	1	4
9.	Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք	1	1	4
10.	Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ	1	1	4
Ընդամենը		12	12	36

[6] Նման է օրացուցային պլանին

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն	1984
2.	Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը	1967
3.	Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ	1987
4.	Դ. Գյուլզատյան, Լեզվի ստորակարգային մակարդակների գոյամակարդակային տեղայնացումը	2019
5.	Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները	1974
6.	Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն	1989
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն	1981

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն[7]
1.	Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները	Լեզվի ստորակարգային մակարդակներ, համակարդակայնության հնարավորությունը	1	ՊԳ 1, 2, 3
2.	Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման: Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը	Գիտությունների խմբավորումը, գիտակարգերի տեսակները, համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերությունը	1	ՊԳ 3

[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

3.	Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների. Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք	Հիմքի լեզվաբանական և արտալեզվաբանական ըմբռնումները: Լեզվական և արտալեզվական հիմքեր	1	ՊԳ 4
4.	Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության	Ձևաբանական և բառակազմական հիմքերի ընդհանուր բնութագիրը	1	ՊԳ 1, 2
5.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր	Անկատարի, կատարյալի և դերբայական հիմքեր: Բառային հիմք, բացարձակ հիմք, բայահիմք	2	ՊԳ 2, 5, 6 ԼԳ 1
6.	Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր	Սերող և բաղադրող հիմքեր	1	ՊԳ 1, 3
7.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	Ձևաբանական հիմքի նորովի ըմբռնումը: Նախադաս և հետադաս հիմքեր	2	ՊԳ 6
8.	Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	Ածանցելի, ածանցում, ածանցյալ: Բարդելի, բարդում, բարդյալ	1	ՊԳ 5
9.	Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք	Վանկահիմքի, արմատահիմքի, շարութահիմքի, ստորոգահիմքի, վերասութենահիմքի սահմանները	1	ՊԳ 4, 5
10.	Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ	Շարույթի և հիմքի սահմանները, փոխթափանցման հնարավորությունները	1	ՊԳ 4

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	ժամաքանակ	Ստուգման ձև	Գրականություն[8]
1.	Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները	Լեզվի ստորակարգային մակարդակներ, համակարդակայնության հնարավորությունը	1	բանավոր հարցում	ՊԳ 1, 2, 3
2.	Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման: Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը	Գիտությունների խմբավորումը, գիտակարգերի տեսակաները, համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերությունը	1	բանավոր հարցում	ՊԳ 3
3.	Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք	Հիմքի լեզվաբանական և արտալեզվաբանական ըմբռնումները: Լեզվական և արտալեզվական հիմքեր	1	բանավոր հարցում	ՊԳ 4
4.	Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության	Ձևաբանական և բառակազմական հիմքերի ընդհանուր բնութագիրը	1	բանավոր հարցում	ՊԳ 1, 2
5.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր	Անկատարի, կատարյալի և դերբայական հիմքեր: Բառային հիմք, բացարձակ հիմք, բայահիմք	2	բանավոր հարցում	ՊԳ 2, 5, 6 ԼԳ 1
6.	Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր	Սերող և բաղադրող հիմքեր	1	բանավոր հարցում	ՊԳ 1, 3
7.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	Ձևաբանական հիմքի նորովի ըմբռնումը: Նախադաս և հետադաս հիմքեր	2	բանավոր հարցում	ՊԳ 6
8.	Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	Ածանցելի, ածանցում, ածանցյալ: Բարդելի, բարդում, բարդյալ	1	բանավոր հարցում	ՊԳ 5
9.	Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք	Վանկահիմքի, արմատահիմքի, շարութահիմքի, ստորոգահիմքի, վերասութենահիմքի սահմանները	1	բանավոր հարցում	ՊԳ 4, 5

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

10.	Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ	Շարույթի և հիմքի սահմանները, փոխթափանցման հնարավորությունները	1	բանավոր հարցում, անցած նյութի կարգաբերում	ՊԳ 4

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեման	Նպատակներ խնդիրներ	Համառոտ բովանդակությունն ու տեսակը[9]	Արդյունքների ներկայացման ժամկետները	Ինքնուրույն աշխատանքի գնահատման չափանիշներ	Գրականություն[10]
1.	Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները: Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման:	Տեղկացնել, որ գիտությունները քարացած չեն, նրանց ներսում կազմավորվում են այլ գիտակարգեր	Գիտակարգերի սահմանները, առարկաների և խնդիրների վերհանումը	05–11. 10	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 1, 2, 3, 4
2.	Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը	Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության	Գիտության և գիտակարգերի մեկնությունն ու խմբավորումը, համամակարդակային գիտակարգերի տեղը գիտությունների համակարգում	05–11. 10	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 1, 2, 3, 4

[9] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

3.	Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք	Հիմքի օրինակով ցույց տալ լեզվական և արտալեզվական աշխարհների հարաբերակցությունը	Հիմքի ըմբռնումը՝ ըստ գիտությունների հարաբերակցության	05–11. 10	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 1, 2, 3, 4
4.	Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության	Ծանոթացնել ձևաբանական և բառակազմական հիմքերի առանձնացման սկզբունքին	Ձևաբանական հիմքեր: Բաղադրական հիմքեր	05–11. 10	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 1, 2, 3, 4
5.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր	Բացահայտել Է. Աղայանի նորարարությունը բայական հիմքակազմության ոլորտում	Բայական, անվանական և դերանվանական հիմքեր: Բառային հիմք, բացարձակ հիմք և բայահիմք: Անկատարի, կատարյալի և դերբայական հիմքեր	18–19. 10	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 2, 5, 6 ԼԳ 1
6.	Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր	Բացահայտել Է. Աղայանի նորարարությունը բառակազմական հիմքակազմության ոլորտում	Սերող հիմք, բաղադրող հիմք: Սերող հիմքերի տիպաբանական տարբերակները	19–25. 10	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 1, 3

7.	Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	Բացահայտել Գ. Ջահուկյանի նորարարությունը ձևաբանական հիմքակազմության ոլորտում	Նախադաս և հետադաս հիմքերի տիպաբանություն	01. 11	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 6
8.	Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի	Բացահայտել Գ. Ջահուկյանի նորարարությունը բառակզմական հիմքակազմության ոլորտում	Բառակազմական հիմքերի շարահյուսական հարաբերակցությունը: Ածանցելի, ածանցում, ածանցյալ: Բարդելի, բարդում, բարդյալ	02–08. 11	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 5
9.	Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք	Համասեռության սկզբունքի կիրառում ստորակարգային բոլոր մակարդակների նկատմամբ	Լեզվի տարամակարդակ հիմքերի հարաբերակցությունը	15. 11	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 4, 5
10.	Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ	Վեր հանել շարային և հիմնային հիմքերի օրինաչափությունների ընդհանությունն ու տարբերությունը	Հիմքագիտության և շարութաբանության հարաբերակցությունը: Հիմնային հարացույցներ: Համակցաբանական շարութաբանություն	16–18. 11	Համապատասխանության աստիճանը հանձնարարված նյութին: Ինքնուրույն դատելու կարողունակությունը	ՊԳ 4

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[11]

Դասընթացի ուսումնական աշխատանքի ձևերը	Կիրառվող նյութատեխնիկական միջոցի անվանումը	Լսարանի ապահովում
Դասախոսություն	գրատախտակ	սովորական
Գործնական աշխատանք	գրատախտակ	սովորական
Ինքնուրույն աշխատանք	գիտական և ուսումնական ձեռնարկներ, համացանց	սովորական

[11] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

14. Գնահատում

Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ)անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[12]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

---

[12]՝՝Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման եվ հաշվառման կանոնակարգ՝՝(ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից արձ. թիվ 1 (23.02.2017թ.), փոփոխված՝ 30.01.2020թ. արձ. թիվ 1) https://vsu.am/karg/2020/balayin-reytingayin-20.pdf

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[13]

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները
2. Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման: Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը
3. Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք
4. Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության
5. Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր
6. Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր
7. Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի
8. Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի
9. Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք
10. Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ

<u>Ա) 1-ին ընթացիկ ստուգում</u>

- **Ընդգրկված հարցեր.**
- Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները
- Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման: Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը
- Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք
- Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության
- Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր

<u>Բ) 2-րդ ընթացիկ ստուգում</u>

[13] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

- **Ընդգրկված հարցեր.**
- Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր
- Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի
- Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի
- Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք
- Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ

14.4. Գնահատման չափանիշները.

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ քննության ժամանակ ։
- Գործնական աշխատանքները՝ գումարային 40 միավոր գնահատմամբ:
- Ինքնուրույն աշխատանքը՝ գումարային 20 միավոր գնահատմամբ:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011401.19.7 Հայոց լեզու և գրականություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **մանկավարժության մագիստրոս**
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՀԼԳ/մ–013 «ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՐԳԵՐ»</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">2 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">I տարի, II կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="4">Ժամերի բաշխումը</td><td rowspan="2">Լսարանային</td><td rowspan="2">24</td><td>Դասախոսություն</td><td>12</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>12</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="2">36</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="2">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Գիտակարգի նպատակն է՝ 1) ցույց տալ, որ լեզվաբանության ներսում կան ստորակարգային մակարդակների վրա հիմնված համամակարդակային գիտակարգեր, 2) բնորոշել հիմքի և շարույթի էությունը, պարզել նրանց բնույթը, տեսակները, 3) ծանոթացնել հիմքագիտական և շարութաբանական հետազոտության մեթոդներին, այդ մեթոդներով պարզել առաջադրվող հիմքերը և շարույթները:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Գիտելիք – դասընթացի վերջում ուսանողը ձեռք է բերում լեզվական իրակությունների մակարդակային և համամակարդակային միավորների լիարժեք պատկերացում, լեզվական և արտալեզվական միավորների համաբնութենականության իմացություն՝ պայմանավորված համասեռության սկզբունքով

Հմտություն – դասընթացի վերջում ձեռք է բերում լեզվական միավորները տրամախոսաբար միմյանց և արտքային իրականությանը հակադրելու և նույնացնելու հմտություն

Կարողունակություն – դասընթացի վերջում ուսանողը ելնում է տարբեր համակարգերի միասնականության սկզբունքից, զատում և համատեղում է տարբերությունների նույնացման և նույնությունների տարբերակման մեկնակետերը</td></tr>
<tr><td>Դասընթացի բովանդակությունը</td><td colspan="4">Թեմա 1: Լեզվաբանական համամակարդակային գիտակարգերի առարկաներն ու խնդիրները
Թեմա 2: Գիտակարգերի տեսակները՝ ըստ բնույթի և ըստ ընդգրկման: Լեզվաբանության համամակարդակային և մյուս գիտակարգերի հարաբերակցությունը</td></tr>
</table>

	Թեմա 3: Հիմքի հասկացությունը՝ ըստ արտալեզվական և լեզվական ըմբռնումների Ճարտարապետական հիմք, կենսաբանական հիմք, քիմիական հիմք, լեզվաբանական հիմք Թեմա 4: Լեզվաբանական հիմքի ըմբռնումը՝ ըստ հիմքագիտության առաջնային բաժինների՝ ձևաբանության և բառակազմության Թեմա 5: Ձևաբանական հիմքերը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Համակարգային-հարացուցային և գծակարգային հիմքեր Թեմա 6: Բառակազմական հիմքի բնորոշումը՝ ըստ Է. Աղայանի հայեցակարգի: Բաղադրական հիմքեր Թեմա 7: Ձևաբանական հիմքերը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի Թեմա 8: Բառակազմական հիմքերի բնորոշումը՝ ըստ Գ. Ջահուկյանի հայեցակարգի Թեմա 9: Վանկահիմք, արմատահիմք, շարութահիմք, ստորագական հիմք, վերասութենական հիմք Թեմա 10: Շարութային հիմքեր և հիմնային շարույթներ
Գնահատման մեթոդները և չափանիշները	• Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ քննության ժամանակ ։ • Գործնական աշխատանքները՝ գումարային 40 միավոր գնահատմամբ: • Ինքնուրույն աշխատանքը՝ գումարային 20 միավոր գնահատմամբ:
Գրականություն	*Պարտադիր՝* Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984 Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե. 1967 Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987 Դ. Գյուլզատյան, Լեզվի ստորակարգային մակարդակների գոյամակարդակային տեղայնացումը, Ե., 2019 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989 *Լրացուցիչ՝* Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981